ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-3-Ե- 7372

«23» սեպտեմբերի 2025թ.

«ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՔԻՄԻԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Արշակունյանց 125/3)

«Ս.Ա.Վ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆԻՆ
(հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Առինջ Բ թաղամաս, 1-ին փողոց, թիվ 2/1)

«ՄԲ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆԻՆ
(հասցե՝ Սարալանջի Փ. /Շ /5 /25ԲՆ/ Աբովյան Աբովյան Կոտայք Հայաստան)

«ԷԳԼԱ ՀԵԼՖ ՔԱՄՓԸՆԻ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՂԱԶԱՐՅԱՆԻՆ
(հասցե՝ Արարատի մարզ, Բուրաստան, Պարույր Սևակ 3 փ)

Հարգելի՝ մասնակիցներ,

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային, տնտեսական ապրանքների, տնտեսող լամպերի և ավտոմեքենաների անիվների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/17» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

«ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՔԻՄԻԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը հաստատված են լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հայտով ներկայացված է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ՝ լիազորագիր, սակայն լիազորագրում նշված չէ դրա տրման տարին, ամիսը և ամսաթիվը:

«Ս.Ա.Վ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված

պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում հայտարարության առաջին նախադասությունում սխալ է նշված պատվիրատուի անվանումը՝ «Դատական դեպարտամենտ»-ի փոխարեն նշված է ««ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ»:

«ՄԲ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ

- 27-րդ չափաբաժնի մասով eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ նկարագրում բացակայում են հրավերով նախատեսված «Ապրանքները պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 2023 թ. հունիսի 16-ի N 957-Ն որոշմամբ հաստատված «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի պահանջներին:», «Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը Գնորդի պահեստ իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին:» պայմանները:

«ԷԳԼԱ ՀԵԼՖ ՔԱՄՓԸՆԻ» ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը հաստատված չեն տնօրենի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հաստատված են այլ անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն հայտով ներկայացված չէ վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ (լիազորագիր),

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ հայտարարագրում նշված կայքէջի հղումը սխալ է՝ հղմամբ հնարավոր չէ տեսնել հրապարակված հայտարարագիրը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/17» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի **սեպտեմբերի 24-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/17» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան
Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788